

Տիգրան Զարգարյանի այցը Ալեքսանդրիայի գրադարան

Հայաստանի Հանրապետության մշակույթի և Եգիպտոսի Արաբական Հանրապետության ներդրումների և միջազգային համագործակցության նախարարությունների միջև կնքված փոխըմբռնման հուշագրի համաձայն, Հայաստանի ազգային և Եգիպտոսի Արաբական Հանրապետության Ալեքսանդրիայի գրադարանների միջև փոխշահավետ համագործակցության սկսման նպատակով, ս. թ. հունվարի 29-30-ը ՀՀ մշակույթի նախարարության մշակութային ժառանգության և ժողովրդական արհեստների վարչության գրադարանային ոլորտի գլխավոր մասնագետ Նազիկ Հովասափյանը և ՀԱԳ տնօրեն Տիգրան Զարգարյանը պաշտոնական այցով եղան Ալեքսանդրիայի գրադարանում: Գրադարանի տնօրեն Մուստաֆա Էլֆեկի հետ հանդիպման ժամանակ, քննարկվեցին երկկողմ հետաքրքրություն ներակայցնող հարցեր, ինչպիսիք են համատեղ ցուցահանդեսների, համաժողովների և աշխատանքային հավաքների անցկացման հեռանկարները, համատեղ տեղեկագրերի հրատարակումը, գրադարանագիտության բնագավառում մասնագետների փոխանակումը: Հայաստանյան կողմը Ալեքսանդրիայի գրադարանին նվիրեց արժեքավոր գիտական գրականություն: Հանդիպմանը մասնկացում էր Ալեքսանդրիայի Հայ առաքելական եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Գրիգոր Մուրադեանը: